ՊԱՇՏՈՆ	Մասնաճյուղի կառավարիչի տեղակալ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Ամբողջ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան,
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	10/08/2024
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Մասնաճյուղի կառավարիչի տեղակալի ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- CRM ծրագիր ներմուծված հաճախորդների տվյալների, սկանավորած փաստաթղթերի, փաթեթների ստուգում:
- Մասնաճյուղի աշխատակիցների կողմից իրականացվող ընթացիկ աշխատանքների կազմակերպում, վերահսկում, դրանց անընդհատության ապահովում:
- Տերմինալի լիցքաթափման ապահովում:
- Մասնաճյուղում ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման ապահովում:
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան գործարքների հաստատումների իրականացում:
- Հաճախորդների գոհունակությունը բարձրացնելու նպատակով մասնաճյուղում հաճախորդների սպասարկման բարձր չափանիշների ապահովում
- Հաճախորդներին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ համապատասխան խորհրդատվության/տեղեկատվության տրամադրում:
- Բանկում սահմանված կարգապահական կանոնների խախտման և իր պաշտոնեական պարտականությունների չկատարման համար պատասխանատվության կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Իրեն վստահված Բանկի գույքի նպատակային և միայն ծառայողական նպատակներով շահագործում:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվության կրում:
- Բանկում սահմանված ներքին, կարգապահական աշխատանքային ռեժիմի և գործարար էթիկայի կանոնների պահպանում, աշխատողների արտաքին տեսքի վերաբերյալ միասնական ստանդարտների պահպանում,

ղեկավարության կողմից իրեն տրված հանձնարարականների ճիշտ և ժամանակին կատարում:

- Մասնաճյուղի կառավարչի կողմից այլ հանձնարարականների կատարում
- Պատասխանատու է իր գործունեության ոլորտում ծագող գործառնական ռիսկերը կառավարելու և նվազեցնելու համար:
- Իր ղեկավարած ստորաբաժանման ներքո գործառնական ռիսկի պատահարի տեղի ունենալու դեպքում պարտավոր է խելամիտ ժամկետում պատահարի վերաբերյալ կազմել սպառիչ հաշվետվություն և այն տրամադրել գործառնական ռիսկերի կառավարման բաժնին:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- Նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ բանկային ոլորտում
- Դրամաճանաչություն
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Լեզուների իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Վաճառքի հմտություններ
- Վերլուծական հմտություններ
- Կատարողական ցուցանիշների ապահովման ունակություն
- Անձնակազմի կառավարման հմտություններ
- Փորձով և գիտելիքով կիսվելու հմտություն նոր աշխատակցի մենթոր լինելու համար
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն / լարված գրաֆիկով աշխատելու կարողություն

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: